

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի չորակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Վաճառականութիւնը մեր մէջ—նեթիֆին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ կերպից. Նամակ Հին-Նախնի-
անից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Անցադրերի խնդիրը. Թիֆլիսի հայերը և իրանց
գրայինները. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻԴՆԵՐ.—
ԲՈՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Գաւառական հերոսներ:

ՎԱՃԱՐԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ

I

Հայ ազգը յայտնի է շատ հին ժամանակներից, որպէս առեւտրական ազգ: Վաճառականութիւնն էր, որ զլիաւորապէս յայտնի էր դարձրել հայերին լուսաւորված աշխարհին: Մեր ժամանակ վաճառականներն էին միայն, որոնք գնում էին լինելով իրենց հայրենիքից և վերադառնալով արդէն ապրանքները և բերելով մեզ մօտ եւրոպական ապրանքներ (մեծ մասամբ շրջապատված ապրանքներ): Եւ մեր վաճառականներն այն օգուտն էին տալիս մեզ, որ ծանօթացնում էին լուսաւորված աշխարհը մեզ հետ, իսկ մեզ ծանօթացնում էին լուսաւորված աշխարհի հետ: Դա մեզ օգուտ էր:

Սակայն այժմ այլ ևս նոյն նշանակութիւնը չունի մեր վաճառականների եւրոպայ գնալը, քանի որ այժմ մենք ինքներս յաճախ ծանապարհորդում ենք եւրոպայ, մեր երկրասարքները և նոյն իսկ մեր օրիորդները ուսում են առնում եւրոպայում: Ուրիշ օգուտ, որ տալիս էին մեզ վաճառականները, այդ այն էր, որ հարստանալով նրանք դրամական միջոցներ էին նուիրում ազգային այլ և այլ հաստատութիւններին, հիմնում էին դպրոցներ և ապարանքներ, փողեր էին նուիրում քաղաքներին, վանքերին, եկեղեցիներին... Բաւական է միայն յիշել Մուրադբեկան, Բապայէան դպրոցները, Լազարբեկան, Բապայէան և այլն: Նրանք ծանապարհորդում էին (որը հիմնական շնորհաւորանք էր) իրենց հայրենիքը, որն այսօր էլ հայրենիք է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Բարեհաղին

Դրանով Գաթանեան ուղարկ էր խօսքը վերջացնել, նա տեսնում էր որ այդպիսի մարդկանց պակասութիւնը ծածկելը օգուտ էր տալիս, վերջապէս պէտք էր ճշմարտութիւնը երեսին խփել, որ զոհե կարծրեն: Բայց նա զարմացած նկատեց, որ Գեորգը չէր կարծրեց, այլ նոյն կերպով շարունակեց:

—Իմ կեանքն ինչով է պակաս Գեորգ հաղարներ էք փչացնում անհաշիւ և կեանքներդ էք փչացնում, իսկ ես կօպէկով եմ ապրում և մի և նոյն ժամանակ ասում եմ, որ ձեր գոված առաջադիմութիւնը մահուան դուռը շուտ գնալ է նշանակում: Եր նշանակի որ ես լաւ եմ ապրում:

—Դու երբեք չես քաղցած մնում, որ մեռնես, իսկ այդպէս ապրելով կօպէկի կէսն էլ կարող ես պահել:

—Բայց ես քաղցած չեմ. փառք Աստուծոյ, ինչեւ պիտի քաղցած մնամ: Ո՛վ է ինձ քաղցած տեսել:

—Դարձեալ փորի հարց... Գաղցած չէ քո փորը, բայց ուրիշ կողմով սովանա՞հ ես դառնել: Օրինակ, ստանում ես որ և է Լրագիր:

Գեորգը ծիծաղեց, հարցը նրան շատ հասարակ, շատ փոքր թուաց. այդպիսի մի վիճաբանութեան մէջ այդ տեսակ հարցն առաջարկելով հակառակորդը, նրա կարծիքով, կորցրել էր իր բոլոր

վաճառականները, որոնց տոհմը վերջը աղանահան դարձաւ, նմանապէս և Ներսիսեան զգորցը, որը հիմնվեց զլիաւորապէս մեր վաճառականների նուէրներով:

Բայց ի՞նչ էր այն ժամանակ մեր վաճառականութիւնը. նա ուրիշ բան չէր, եթէ ոչ ապրանքների փոխանակութիւն, իսկ ինքն վաճառականը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի միջոցով դա առեւտրի սկզբնական ձևն էր: Առեւտրը հարստացնում էր անհատին միայն և ոչ թէ ազգը և երկիրը: Երբ Ռուսաստանը նուաճեց Կովկասը, հայ վաճառականի համար բացվեց մի նոր և լայն ապարկեղ զօրքերի մեծ քանակութեան երկիրը մէջ ներկայութեան պատճառով առեւտրը սկսեց ծաղկել. բայց սրա նից, քանի որ Ռուսաստանը ստիպված էր անընդհատաբար պատանդներ մղել կամ լուծարել ապրանքներ, կամ Թիֆլիսի ու Պարսկաստանի դէմ, հայ վաճառականը այլ և այլ կապերով վերցնելով սկսեց սաստիկ հարստանալ:

Սակայն այդ ժամանակներն անցան, և այժմ ամեն տեղ զանգուտներ են լսվում, թէ առեւտրն ընկել է, այլ ևս ոչ մի տեղ գրեթէ առեւտրը չէր կայ: Մեր երկրի եկան օտարներ, թէ ուսեալ արհեստագործներ և թէ կապիտալիստ արդիւնաբերներ և սկսեցին մրցել մեզ հետ: Պարզ է որ ժամանակի պահանջման համեմատ առեւտրը մեղմանում պէտք է փոխ այժմ իր ձևը, պէտք է կերպարանափոխվի, պէտք է վերանորոգվի: Սակայն ինչպէս փոխվի:

Նա պէտք է այնպէս փոխվի, որ չը մնայ լոկ առեւտուր, այլ կապվի և կը ընկնի, երկրի արդիւնաբերութեան հետ: Ինչպէս առանձին անհատը այն ժամանակ միայն հարուստ կարող է համարվել, երբ զարգացրել է իր այս կամ այն ձեռքը, դիտէ մի փեշակ, մի արհեստ, ունի մի մասնագիտութիւն, ուրեմն կարող է անընդհատաբար ստեղծել արդիւնաբերել—այնպէս էլ ամբողջ դասակարգն այն ժամանակ հարուստ կը լինի, երբ արդիւնաբերութիւնը բաց է ապրկեալ, նա պարտք համարեց իր սովորական դիրքը բռնել և այդ հարցի ժամանակ:

—Լրագիր... չեմ ստանում: Ինչու: Որովհետեւ ինչ կայ լրագրի մէջ: Իմ ինչիս է հարկաւոր իմանալ թէ աշխարհի այս կողմում ինչ մարդ կայ, ինչ է անում: Թող ինձանից խօսեն, թող ինձ սովորեցնեն, որ լաւ մարդ դառնամ:

—Լրագրի նպատակն էլ հենց այդ է, որ քեզ լաւ մարդ շինես: Ուրիշ ի՞նչ միտք ունի:

—Ի՞նչ միտք... Փողի միտք ունի: Մեղանից փող ստանալն է միտքը: Լրագիրն էլ մեր ցաւին դարձան չէ, բայց կարող էր դարձան անել: Ինչու, օրինակ, ձեր լրագիրը չէ սովորեցնում ինձ թէ ես ինչպէս պիտի յարաբերվեմ սկսեմ բանիկ հետ, ինչպէս պիտի թույլ տրեմ, սովոր պահանջեմ, որ արժեթուղքն է հարկաւոր պահել և որը ժամանակին ծախել: Գիտես, որքան վնաս ենք ստանում այդ բաները չլինելուց: Կանոն դնողը իմաստուն մարդ է եղել. առևտրի բան է, պէտք է խելք ունենալ որ չը վնասվես: Ո՛վ է մեզ խելք սովորեցնողը: Ձեր լրագիրները:

Այդ ասելով նա հանեց իր ծոցից թղթերի մի մեծ կապոց, ցոյց տուեց Գաթանեանին և ասեց, որ թէ նա հետաքրքրվում է թէ ինչպէս է ինքը գործ տեսնում, կարող է կարգաւ, այդ թղթերը բանիկ հետ իր ունեցած գրադուրութիւնն է: Գաթանեան թղթերին չը նայեց: Եւ զարմանալով բան, երկաստորի դայրով Նեղոյնեմ տեղի էր տալիս մի հետաքրքրութեան: Նա չը կարեց խօսքի թելը, այլ հարցրեց.

—Լաւ, պ. Գեորգ, լրագիրը թղթերը, ուրիշ ինչ լաւ բան ես անում: Ուսումնարանին մի բան տալիս ես:

—Ոչ, թէ տալիս եմ, այլ գողանում եմ, իսկոյն պատասխանից Գեորգը:

Երկրաստորը համարեա տեղից վեր թուաւ. նա կարծում էր թէ այդ մի ծաղր է և մի սատիլի արհամարհանք: Երբ նայեց իր սովորական շրթունքներին վրա: Բայց Գեորգը իր սովորական եղանակով խնդրեց նրան, որ իրան հաւատալ: Նա մինչև անգամ իր երեսին խաչ հանեց և շարունակեց.

Եւ երբ ոչ կը լինի, և ոչ թէ միայն լինի միջնորդ, զբաղվի միայն ապրանքների փոխանակութեամբ և ապրանքը մի տեղից միւս տեղ բերելու համար՝ ստանալ կօմիսիւն...

Մենք պէտք է վերջապէս կապվենք մեր երկրի հետ, ստանանք մեր հարստութիւնը երկրից, մշակելով մեր երկրի հանքային, երկրաբանական, այգեգործական հարստութիւնները, հասցնենք մեր արհեստները ֆաբրիկայի աշխարհին:

Երկիրը արդիւնաբերող է անուանվում, երբ նա օգտվում է իր բնական բոլոր հարստութիւններից, արդիւնաբերող մշակում է այդ հարստութիւնները և արտահանում է իր բերքերն ու իր գործարանական, արհեստագործական արդիւնքները: Դեպի օտար երկրները: Երկիրն այն ժամանակ հարուստ է համարվում, երբ նա անելի արտահանում է, քան ներմուծում: Մինչև այժմ մենք մեծ մասամբ ուրիշ երկրներից էինք ներմուծում ապրանքներ մեզ մօտ, ուրեմն մեր երկրից ապրանք կամ բերք այնքան չէր դուրս գնում, որքան ուրիշ տեղերից մեզ մօտ էր դալիս. ուրեմն մեզ մօտ ապրանք էր դալիս, իսկ մեզանից փողը դուրս էր գնում: Այդպիսով մենք, որ ապրում ենք հարուստ երկրում, ինքներս չէինք օգտվում մեր երկրի հարստութիւններից, այլ ուրիշներից: Երբ մեր փողով ուրիշ երկրները: Մենք, ընդհակառակն, պէտք է ձգտենք այն բանին, որ ուրիշ երկրները մեզ ապրկեն և ոչ ոչ...

Մենք և միջին առեւտրականների համար հարկաւոր են արհեստներ, այնպիսի արհեստներ, որոնք կապ ունեն երկրի հարստութեան հետ: Մենք չենք խօսում այն ողորմելի, նահապետական արհեստների մասին, երբ մի հայ հնադարեան արհեստաւոր, ծաղապատիկ նստում շինում է մի զենք, մի մատանի, մի քամար և այլն, բայց այնպիսի արհեստների մասին, որոնք հիմնված են ուսման, մասնագիտութեան վրա:

—Ոչ, թէ տալիս եմ, այլ գողանում եմ, իսկոյն պատասխանից Գեորգը:

Երկրաստորը համարեա տեղից վեր թուաւ. նա կարծում էր թէ այդ մի ծաղր է և մի սատիլի արհամարհանք: Երբ նայեց իր սովորական շրթունքներին վրա: Բայց Գեորգը իր սովորական եղանակով խնդրեց նրան, որ իրան հաւատալ: Նա մինչև անգամ իր երեսին խաչ հանեց և շարունակեց.

—Հաւատալից, ճշմարիտ է խօսքս, գողանում եմ... Ահա պատմեմ: Մի անյայտ բարերար, որ ծածուկ է ուղարկ մնալ, ամեն տարի անընդհատ ինձ մի գումար է տալիս, որի ծախսելու իրաւունքը ինձ է թողնում: Այդ նուէրը անուանվում է բարեգործական: Առաջին անգամները այդ նուէրը ես ամբողջովին տալիս էի ուսումնարանին, բայց հիմա չեմ տալիս, գողանում եմ, ինձ համար եմ ծախսում:

—Եւ յետոյ գնում ես եկեղեցի... —Գնում եմ, ինչ կայ, աղօթում եմ. դեռ այն փողից մի մի աղքատներին ողորմութիւն եմ տալիս: Ես գիտեմ, որ մեղք չեմ գործում: Մեղք էլ ինչից այն ժամանակ, թէ ես ոչ ոքին չասելի, ծածուկ գողանալի: Դու հօ գիտես, որ աշխարհն կուր տեղ է. կուտում են որ ապրեն, միմեանց ուտում են, միմեանց ոչնչացնում են և ոչ մի մեծ մարդ, ոչ մի փիլիսոփայ այդպէս անողորմելի ինչպէս է անուանվում, մոռացել էմ. դու լաւ կիմանաս:

—Գոյութեան կռիւ, ասեց Գաթանեան: —Հա, գոյութեան կռիւ, գոյութեան կռիւ... Մենք կռիւ է, մեծ պատերազմ է: Ես էլ հենց այդ կռիւն եմ անում: Ես ուտում եմ, բայց դու լաւ

թեան վրա, որոնք արդիւնաբերող են երկիրը, հարստացնում նրան և որոնց արտադրածը կարող է նոյն իսկ արտահանութեան առարկայ դառնալ: Օտար ուսեալ արհեստաւորները զայիս են մեր երկիրը և ամեն բան իրանց ձեռքն են գցում, իսկ մենք մնում ենք մեր նահապետական արհեստներին և նահապետական առեւտրին հաւատարիմ: անկարող լինելով մրցել նրանց հետ... Եթէ մեր առեւտրական միջին դասակարգի ներկայ սերունդը այդ տեսակ մրցութեանը պատրաստ չէ, զոհն թող նա արհեստագիտական ուսում տալ իր դասակարգին, իր յաջորդ սերունդին: Ինչի մի գերմանացի կարող է առաջին կազմարար լինել մեզ մօտ, իսկ հայը չէ կարող. ինչի մի ֆրանսիացի, օգտվելով մեր երկրի մրգերից, կարող է առաջին կոնգիտէր լինել, իսկ հայը չէ կարող. ինչի մի գերմանացի կարող է կահկարասների (մեքելի) ընդարձակ արհեստանոց ունենալ Թիֆլիսում, իսկ հայը անընդունակ է այդ բանին. ինչի մի մրգերով հարուստ երեսնի նահանգի պէս երկիրը մենք ինքներս անուս ենք առնում, իսկ մի հրէայ Վօլգին կարող է զայ մեր մրգերից գեղեցիկ կոնսերվներ և մուրաբաներ պատրաստել, ու վաճառահանել այդ արդիւնքները, ուրիշ հրէաներն էլ կարող են զայ նոյն նահանգը և շոգեմքերէններով մրգեր չորացնել մեծ քանակութեամբ, օտարները կարող են զայ և մեր գինիները կատարելաբար, կամ մեր բամբակը վաճառահանել, իսկ մենք շարունակում ենք անհոգ մնալ և չենք օգտվում այդ հարստութիւններից: Ամօթ չէ մեզ համար և ծիծաղելի չէ արդեօք, որ մրգերով և բանագործներով հարուստ երկիրը ինքն ոչինչ չէ պատրաստում, իսկ ընդհակառակն ստիպված է առնել նոյն իսկ մեր բանագործներից և մրգերից Բոստօնում պատրաստած կոնսերվները, Աստրախանից կամ Օդեսայից տալու: Երբեք մեր թղթը լի չէր դրամ խնայող, Կիւմիկից Արթիկօսովի ֆաբրիկայում պատրաստած մուրաբաները և այլն...

Ես, չես պահանջում, բերանիցս չես խլում. ինչու չը պիտի ուտեմ: Այս ձեր գիտնականների խօսքն է, իմ ակամքով եմ լսել: Առաջ ինձ համար այդ խօսքը պարզ չէր, բայց յետոյ միտք արի և շատ հաւանեցի այդ ոճը. չեղովեան կռիւ: Թող դան, խլեն, պահանջեն. թող ինձ վախեցնեն, իմ բերանիցս հանեն: Մինչև որ վախ չը լինի, ոյժ չը լինի, ես չեմ տալ: Տեսնում ես, պ. Գաթանեան. ես չեմ ծածկում, հարկւր տեղ, հարկւր մարդու հետ մի և նոյն եմ կրկնել: Եւ կրկնել եմ ոչ թէ ինձ ցոյց տալու համար, այլ որպէս զի սովորեցնեմ կուտելը, որպէս զի իմաց տամ թէ որքան խելք եմ իրանք, այդ մարդիկ, որ հասարակութեան դուռն են անուանվում, ուսումնարան են պահում, ասելով թէ մեծ նպատակի համար է: Մեծ մեծ խօսել գիտեն, բայց, լաւ իմացիլ, ինձ թողնում են որ հանդիստ ուտեմ, դողանամ: Ես ասում եմ, որ պիտի պահանջեն դաստաստանով, ես դրանց քաջութիւնն եմ ուղարկ տեսնել: Բայց քաջութիւն չը կայ, թոյլ եմ. իսկ թոյլ մարդկանց ողորմութիւն տալը մեղք է:

Գաթանեան երկու ձեռքը միմեանց խփեց զարմանալից:

—Ուրեմն դու այդպիսի մարդ ես եղել, ասեց նա ծիծաղելով.—դու մինչև անգամ քո բարեկամից ես գողանում... Արդեւ ինչու պահանջում է, որ դու նրանից փող չը ստանաս:

—Այդ չէ կարելի. փողն ինքն է դալիս և ես փողից փախչել չեմ կարող: Բարեկամս մեռած է և իր թողած կտակի այդ մասը կատարողը ես եմ: Մէկ էլ այս կայ, որ ես շատ լաւ գիտեմ բանը. ամեն տեղ հայը հայ է, որտեղ էլ ուղարկես, կորած կը լինի նուէրը:

—Ձե, պ. Գեորգ, խառնովանվիր, որ այդ շատ

Խոշոր վաճառականներին հարկաւոր է հասկանալ, որ նրանք մրցութիւն պէտք է անեն օտար կապիտալիստներին, որոնք գալիս են մեր երկրները: Եւ որովհետեւ օտար կապիտալիստները ջոկ ջոկ վերցրած զրամական աւելի մեծ ոյժ ունեն, քան թէ մերոնք, ուրեմն մեր կապիտալիստները պէտք է իրար մէջ միանան, ընկերութիւններ կազմեն, որպէս զի իրանց ընկերակցութիւններով դիմադրեն օտար կապիտալի ոյժին: Մեր կապիտալիստների մէջ ընկերակցութիւնները կարող են կազմվել միայն այն ժամանակ, երբ կիրառործվի մեզանում փոխադրած համարաշխարհի մասնական, իր տիրէ մեզ մօտ ընկերական ոգին: Եւ դարձեալ մեր կապիտալիստները պէտք է հասկանան, որ նահապետական առեւտրի ձեւը թողած, նրանք իրանց գործունէութիւնը պէտք է կապեն երկրի հետ, երկրի հարստութիւնները արգիւնաշահութեան հետ, պէտք է մշակեն մեր երկրի հանքային, երկրագործական ոյժերը, պէտք է ձեռնամուկ լինեն գործարանական արդիւնաբերութեանը, որպէս զի մրցեն օտարազգի խոշոր կապիտալիստների հետ: Բայց սրանից միացած կապիտալը դարձ, պարսպմունք կը աչէ երկրի ստորին դասակարգին, բանաւորներին, արգելք դնելով այդ դասակարգի զաղթականութեան երեւոյթին:

Հիտեւեալ անգամ կը վերադառնանք հարցին, կը խօսենք գլխաւորապէս մեր վաճառականների միջին դասակարգի մասին և ապա կաշխատենք ընդհանուր մի եզրակացութիւն դուրս բերել մեր ասածներէից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԵՂԶԻՑ

Մայիսի 23-ին

Այսօր մի հաւանական լուր է պատմում, որ կառավարութիւնը մտադիր է մօտիկ ապագայում միացնել տեղեկատու Կերպը, Մերկային և Ամրոցը (Կերպից Մերկայէ Կերպստ է և Կերպից Ամրոցը մօտաւորապէս նորոգման): Մասնաւոր աբ օն է նախ եւ իւր կը մնան նարկական բուրդի:

Մօտերս քաղաքի արուարձանում, Татарская Слобода կոչված տեղում, պատահամբ բացվել է մի հին յուշաց գերեզման, իր գոյնգոյն և սքանչելի նկարներով և հին յուշական արձանագրութիւններով: Գերեզմանը վերին աստիճանի հետաքրքիր է: Մասնադի առջև բացվում է հետեւեալ տեսարանը. նախ մի աննական, որի աջ կողմում գրված է. «այստեղ թաղված է երկրորդ անգամ ընտրված դատաւորը, որը անիծում է նրանց, որ»

ազնիւ բան է. դա գոյութեան կուր չէ, այլ աւագակութիւն, ներքի թէ այս խօսքն եմ ասում:

—Վնաս չունի, կարող ես ասել այն, ինչ որ յարմար է: Բայց ես պատմեցի որ ծածուկ չեմ պահում իմ արածը, իսկ աւագակն այդպէս չի ասել: Ես ամեն ինչ պարզ ասում եմ, դու էլ պարզ աս, պ. Քաթանեան: Համարիմ չէ, որ այստեղ պատճառն այն է, որ քո ուսումնարանը ուսումնարան չէ: Գոյութեան կուր կայ. այդ հօ օրէնք է. մի և նոյն է, Գեորգը չեղաւ, Մարտիրոսը կը տանէ այդ կուր: Եթէ ուսումնարանը լաւ բան է, ինչու այնպիսի մարդ չէ պատրաստում, որ իմանայ կուրը, խելը: Ուսում են տալիս, բայց անհարկաւոր ուսում: Թող սովորեցնեն դատարան գնալը, պահանջելը, թող խօսել, օրէնք հասկանալ, օրէնք բացատրել սովորեն: Այդպիսի բան չը կայ մեզանում: Եւ որքան մեծաներ ենք ստանում զրանից: Ես ինքս շատ եմ փորձել ինձ վրա: Ահա հինգ տարի է, ես չեմ գտնում մի այնպիսի մարդ, որ ինձ համար մի լաւ կտակ գրէ: Ինքս գրելու կարողութիւն չունեմ, բայց մէկը չը կայ որ միտքս, դիտաւորութիւնս ըմբռնէ: Ես այս եմ ասում, լսիր, պ. Քաթանեան: Ես ասում եմ փող ունեմ. այդ փողը հեշտ աշխատած չէ, գտնված չէ. ուրեմն պիտի շատ խելացի կերպով ծախսվի: Ժամանակը փոխվել է, այժմ այլ ես անհնարին է մի այդպիսի գումար աշխատելը, ինչպէս առաջ էր կարելի: Ես ուղում եմ որ իմ ժառանգները չը փչացնեն այդ փողը. ահա չեմ կարողանում: Գիտեմ որ ժառանգներս ինձ պէս չեն լինի. հեշտ և լաւ ապրելու ցանկութիւնը այժմ ամեն մէկին է տանջում: Ինչպէս անեմ որ չը փչացնեն փողը, բայց ապրեն այնպէս որ ինձանից զգուհ չը լինեն: Այդ հարցը ինձ շատ է

բռնը կը համարձակվեն խանդարել ոսկորների աճիւնը: Զախ կողմում, պատի մէջ, շինված է ծաղկանկարներով պատուհան, իսկ պատի վրա նկարված են Մերկայի և երկու աղանակերով թռչունների պատկերներ: Յետոյ այցելողը մտնում է մի երկար նախասենյակ, որի մէջ նկարված են և քանդակված զանազան տեսակ ծաղիկներ, մարդկային մարմին թռչնի գլխով և թիթեաներ:

Մայիս ամսին թափվեցան քաղաքս Ռուսաստանի հարաւային նահանգներից հաղարատը մը չափներ, գլխաւորապէս հնձորներ, որոնց մեծագոյն մասը անգործ թափուում է, իսկ աշխատողները ստանում են օրական 30—40 կօպէկ վարձ, մինչդեռ առաջ 1—2 բուրբի օրական վարձ էին ստանում:

Այս տարի վաճառականութիւնը մեծ մեծաներ կրնայ:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆՈՒՆԻՑ

Մայիսի 26-ին

Մեր երկրասարգութիւնը երկար լռելուց յետոյ վերջապէս վճռեց յօդուտ ուսումնարանի տալ մի նապատակաւոր մարդ ներկայացում տեղիս օրիորդաց ուսումնարանի դասընթաց. պիտի խաղան «Արշակ» երկրորդը և «Երեմ-Արեմ»-ը: Ուսումնարանի քննութիւններն արդէն սկսվել են սոյն ամսի 23-ից, իսկ տարեկան ակտը լինելու է յունիսի 17-ին օրիորդաց ուսումնարանի դասընթացում, որտեղ և կայանալու է օրիորդաց ձեռագործութեան վիճակախաղը:

Մեզանում այժմանից սկսում են անտանելի շղթեր լինել, այնպէս որ ցերեկները փողոցներում փաշի ձեռքից անց ու դարձ անել անկարելի է, իսկ առողջապահութեան և մաքրութեան կողմից աւելորդ է մինչև անգամ յիշել, որովհետեւ թէ փողոցներում և թէ խանութներին առջև ամենայն մի անց ու դարձ անող կարող է նկատել լայնութիւնը դարձահոտութիւնների կոյտեր, որոնցից և կարող են առաջանալ դանազան տեսակ տաբախիսիկ հիւանդութիւններ: Ուստի աղքի առաջ ունենալով մեր հարեան Պարսկաստանում խօշիւյայի յայտնվելը, դարձնում էր քաղաքիս ոստիկանատան ուշադրութիւնը այդ անմաքրութիւնների առաջն աւանդու վրա:

Այս տարի մեղանում խաղալի բերքը, համեմատելով միւս տարիների հետ, շատ սակաւ կը լինի, պատճառը, որ դարձեալ խաղալի վաղըրը ենթարկվեցան ցրտի, իսկ ցորենը և ուրիշ դաշտային ցանքերը միջուկայ անդադար տեղացող անձրեւներից առատ պտղաբերութիւն են խոտանում:

Վերջապէս մեր քաղաքի Ս. Գեորգ եկեղեցու

դանդակատան վերաշինութիւնը տան և հինգ տարիներով կիսաշին մնալուց յետոյ, համեմատ հանգուցեալ մահտեի Մկրտիչ Թոնեանցի կտաւին, որ իր հաշուով պիտի վերաշինվէր, այժմ այս գարունը սկսվեց շինվել:

Առևտուրը մեզանում հետզհետէ սկսում է մուկեային դրութիւն ստանալ, իսկ մթերքների գները բոլորովին ընկնել:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» ներկայ համարի հեղագիրների բաժնում ընթերցողը կը կարդայ մի շատ նշանաւոր կառավարչական կարգադրութիւն, այն է, որ կովկասեան կառավարչապետ, իշխան Գոնչուկով-Կորսակով, իր հիւանդութեան պատճառով հրաժարական է տուել իր պաշտօնից, իսկ նրա տեղը նշանակված է երկրիս կառավարչապետ՝ գեներալ-ադիւտանտ Զերեմէտով:

«Тифл. Лист.» լրագիրը լսել է, որ Պարիզում նոր վախճանված հարուստ Մկրտիչ Սանասարեան թողել է հետեւեալ կտակը. 300 հազար բուրբի հանգուցեալ թողել է յօդուտ այլ և այլ բարեգործական նպատակներին, իսկ 100 հազար իր քրոջ որդուն, երեանցի լոբիշ Լևոն Տիգրանեանցին: Կտակակառարներ նշանակված են՝ պ. պ. Եղեան, Տիգրանեան և Եւանդուկեան:

Թուրքիայի 5-ին տեսնելի էր ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ արեւելի մասնաւոր խաւարում: Սակայն երկիրը ամպերով ծածկված լինելով, ժամը 12-ին անհամարին էր դիտել խաւարում: Միայն ժամը մօտ 3-ին, երբ ամպերը ցրվեցան, նկատելի եղաւ արեգակի մի մասի վրա արդէն հետզհետէ պակասող լուսնի ստուերը:

«Новое Обозрение» լրագիրը իր վերջին համալրում արտատպել է «Մշակ» № 60-ի մէջ տպված «Պէտք է համերաշխ լինե՞նք» մեր առաջնորդող յօդուածի բովանդակութիւնը:

«Кавказ» լրագիրը սկսել է տպագրել մի շարք շատ հետաքրքիր և ուսանելի բանասիրական յօդուածներ «Изъ прошлоу Ойванской гимназіи» վերնագրով: Այդ յօդուածների մէջ խօսվում է և այն վիճակի մասին, որի մէջ գտնվում էր հայոց մտաւոր կեանքը Ռուսաստանի ձեռքով մեր երկիրը նուաճելուց առաջ:

Երկուշաբթի, յունիսի 4-ին ԹԻՖԼԻՍԻՍ հայոց դերասանական խումբը ներկայացրեց բանիկ թատրոնում ի պատիւ խալական հռչակաւոր ողբեր:

Մինչդեռ նրանք այդպէս խօսում էին, օրը վերջացաւ: Մայիսի չննալ երեկոյ էր. բոլորակ լուսինը երկնքի մէջտեղից լուսաւորում էր առեւտրական հրապարակը, ուր հետզհետէ տիրում էր գիշերվայ ամպութիւնը: Բարում էր ծաղկած ծառերի սքանչելի անուշահոտութիւնը. հրապարակի ծայրում բուսած ծառերը արձակել էին հիւսիսային ստուերների և նրանց խիտ տերեւները արձակելի պալ էին տալիս լուսնի լոյսի տակ: Մեղմ քամին հանդարտ օրորում էր տերեւները, հանդարտ քրքում էր Գեորգի երեսին: Հեռու ընկած դաշտերը կորցրել էին իրանց կանաչ գոյնը և կարծես ընկղմված էին մի կիսաթափանց արծաթաշղթի մէջ. աւելի հեռու երևում էին սարերի սև ուրուականները: Այնպէս դեռ ու դէռ ցցված գծադրութիւնները: Լուսնի այդ հանդարտ, մեղմ լոյսի տակ գաւառական խուլ անկիւնը իր կարճ երեկոն էր անցկացնում: ամբողջ շաապում էին սուռն, ուր կարճ գիշերվայ քունն էր նրանց սպասում: Գեորգն էլ վերկացաւ:

Նա կանգնեց լուսնի լոյսում, մի քանի անգամ դուրս դէպի երկնքը բարձրացրեց, կիսաբաց աչքերով լուսնին նայեց և սկսեց հանդարտ կերպով իր կործքը շփել մի ձեռքով: Նրան նայում էր Քաթանեան և այդ քաղցին սրտանց խղճում էր այդ նիհար ու չոր մարդուն, որ կարծես հաղիւ էր պահվում իր բարակ ոտներին վրա, որոնք թող էին, դողդողում էին: Նա խղճում էր, տեսնելով նրա խոնարհ, կարօտութիւն յայտնող հայեացքը, որը նա ուղղում էր դէպի լուսինը, դէպի այդ ծաղկա՛, զարդարված աշխարհը, բայց ուղղում էր կարճ ժամանակով կարծես վախում էր, յետ էր քաշվում: Երկրասարգը իրաւունք էր տալիս նրան ցանկաւոր, որ դեռ երկար ապրէ, ինչպէս ինքն է

դու, Երեսնաւ Բօսսիի, մեր տաղանդաւոր հեղինակ Գ. Սուքուրեկեանցի «Պէպօ» պիէսան: Ներկայացման ժամանակ ինքն հեղինակը, Բօսսիի հետ լծալում նստած, բացատրում էր նրան Ֆրանսերէն լեզուով պիէսայի բովանդակութիւնը: Թատրոնը գրեթէ կատարելապէս լի էր: Մի այլ լծալում նստած էր տիկին Սալինա՛ Ներկայացման նպատակն էր մի գաղափար տալ Բօսսիին հայոց թատրոնի մասին: Ներկայացման ժամանակ հայ դերասանները մատուցին մի մի ծաղկեայ փունջ՝ Բօսսիին և Սալինային: Խաղալի ողբերգուն ուղարկեց իր փունջը տիկին Սալինային, որը իր լծալից ողջունելով Բօսսիին, չարժուածքներով չնորհակալութիւն յայտնեց ուղարկած փունջի համար: Անտրակտում Բօսսիին քնաց բեմի ետև և չնորհակալութիւն յայտնեց հայ դերասաններին: Հասարակութիւնը ողբերգած կերպով ծափահարում էր դերասաններին և մի քանի անգամ բեմ կանչեց Սուքուրեկեանցին:

Թուրքիայի 11-ին Թիֆլիսի հայ հասարակութեան մի մաս, հայ դերասանների հետ միասին, դիտաւորութիւն ունի ծաղկերով թալ Երեսնաւ Բօսսիին:

Ռուսաց գրող Լ. Տօլստօի մի նոր գրութեան՝ «Крейперова Соната» անունով, որի հետ արդէն ծանօթ է ամբողջ ինտելիգենտ Ռուսաստանը, բաւական խօսակցութիւններին առիթ տուեց թէ ուսու և թէ նոյն իսկ արտասանմանեան մասնաւորին: Տօլստօյ իր այդ նոր գրութեանը հետեւեալ վերջնական եզրակացութիւնն է դուրս բերում. — հարկաւոր է և աճուսնութիւն: Եթէ այդ միտքը յայտնէր մի սր և է անյայտ, աննշան գերող, անկասկած ամենքն էլ կամ արհամարհանքի կենթարկելին և կամ խելացոր կը համարվին նրան: Բայց որովհետեւ այդ գրողը Տօլստօյ է, ուստի «Крейперова Соната» գրութեանը դեռ շարունակում է ամեն տեսակ դատողութիւնների նիւթ տալ և հրապարակել վրա մնալ: Անգլիական լրագիրների հաղորդում են, որ «Universal Review» ամսագրի վերջին տեսարկում, որ լոյս է տեսնելու յունիսի 15-ին, կը տպագրվի Տօլստօյի յօդուածը, որով նա պատասխանում է իր քննադատներին և յայտնում է իր վերջնական, մշակված (?) հայեացքները: Ըստ յօդուածի ետև, աճուսնութիւն և քրիստոնէութիւն մասին:

Գարձեալ ստացանք Գրիգոր Արծրունու գրական 25-ամեակի առիթով ուշացած չնորհաւորութիւններ. դրանք են չուշեցի Պողոս Զաքարեանցի, շառնիկեցի Պատուական Թովմանիսեանցի և Գուրալից Մէլքոն Սալամբեկեանցի չնորհաւորական նամակները:

ուղում: Նա իմանում էր, որ արիւնսածարաւքուրդն էլ գիտէ, որ այսպիսի աշխարհ կայ, այսպիսի լուսին կայ և ապրել է ուղում: Եւ բոլորովին անկեղծօրէն ասեց Գեորգին:

—Յանկատում եմ, որ այս գեղեցիկ օրը քո հաշւին չը գրվի, պ. Գեորգ:

—Հա, լաւ, լաւ, պատասխանեց Գեորգը ծիծաղելով:—Այդպիսի օրը ոչ ոք չի ուղի մտնել: Բայց դու հէնց այդպիսի օրն ես ասում թէ արիւնքաթիւք թափելիս, առաջ վաղիր, կեսնըդ կարճացու: Ո՛չ, ապրելն աւելը քաղցր է...

Բայց երկրասարգը համարեա չը լսեց նրան: Նա ինքն էլ նայում էր մայիսի գիշերվայ կախարական պատկերին:

—Ներողութիւն, ես տուն պիտի գնամ: Չմոռըքնում եմ ժամը ութին, իսկ ամառը ինքին: Բարի գիշեր:

—Ոչոք բարի, պատասխանեց Քաթանեան: Եւ երբ Գեորգի դողդոջուն պատկերը անհետացաւ մի ինչ որ պատի ետևում, նա սկսեց դանդաղ քայլել դատարկ փողոցով:

Սրանք են մեր բարի հոգիները, ասում էր նա ինքն իրան:—Սրանց բան սովորեցնելը ահազին անտանելի ծանրութիւն կը լինի:

Այս, մեծ ծանրութիւն: Ինչպէս սովորեցնես: Երկրասարգը զգաց մի յոգնածութիւն, մի փայտացնող սառնութիւն, երբ մտաբերեց Գեորգի խօսքերը, մաքրեց:

—Իրանց դեռ պէտք է ուսումնասիրել: Այդ նրա վերջին խօսքն էր:

ՍՈՑԻԱԼ. 5 յունիսի: Արտաքին գործերի և ֆինանսների մինիստրներ՝ Սարգսյան և Սարգսյանի հրահանգով տուրք: Ստամբուլի կենտրոնի արտաքին գործերի մինիստրի պաշտոնը, իսկ ժողովրդական լուսավորության մինիստր ժիլկովը կը կառավարի նոյնպէս և ֆինանսների մինիստր լուկինը:

ԲԵՐԼԻՆ 5 յունիսի: Այս օրերս Եւրոպայի կուսակցական կազմերը քննարկելով իշխանութիւնի վիճակը, նշանակալից խոսքեր արեցին Նախագահ լուկինի և Եւրոպայի մինիստր լուկինի հետ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ 5 յունիսի: Հրատարակված են կանոններ, որոնցով իշխանական և ազնուական տիրույթները պիտի լինեն իշխանական թանկարժէքի դասակարգման պատկանող անձանց: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ ենթադրված է Մոսկովյան այս աշանը կազմել կաթնատու և մատու կենդանիների համառոտական ցուցանալու, և անտու կաթնատուների, կաթնատուների և մատու կենդանիների և անտու պահանջների համառոտական ժողով հրահանգել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 5-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	86	55	4
Բերլինի վրա 100 մարկ	42	42	
Փարիզի վրա 100 ֆրանկ	34	35	
Ռուսի	6	96	
Մաքսային կուպոններ	139	50	

Արծաթ	1	9	
Բորային դիսկոնտո	5 1/2	70	
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	99	75	
.	2-րդ	100	
.	3-րդ	99	75
.	4-րդ	100	12
.	5-րդ	99	75
.	6-րդ	99	75
6% ռուսկայ ընտա	149	50	
4% ռուսկայ փոխառութիւն	100	25	
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	100	37	
.	2-րդ	100	25
.	3-րդ	239	
Ներքին 5% առաջին փոխառութիւն	215	50	
.	երրորդ անգ. կալ. ը.	212	
Պետական, երկաթուղային ընտա	103	25	
5 1/2% ընտա	135		
4% ներքին փոխառութիւն	87		
5% գրաւ. թղթ. անգ. կալ. բանկի	93		
4% վիսյակ. գրաւ. հող. բանկի.	99	75	
4 1/2% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մատալ.	103	50	
.	թղթալ.	97	87
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրէկայինները.	96		
Մոսկովի քաղաք. օրէկայինները.	95	12	
Օդեսայի	95	12	
Թիֆլիսի	95	12	
Կրասն. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	95	12	
.	95	12	
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը ամուր է:			

Խմբագիր-հրատարակող ԳԻՒՌՈՐ ԱՐԺՈՒՆԻ

ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵԱՆՑԻ

ԳՏԵՎՈՒՄ Է ՍՈՂՈՒԱԿ, ԳԱՆՈՎԱԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՇԱՀՆԱՋԱՐՈՎԻ

ՅՈՒՆԻՍԻ 1-ից ՍԱՍՏ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳԻՄՆԱՅԻՆ, ԲԷՆԵՎԵՆԻ ԴԵՄՈՒՆԱՐԱՆԻ, ԿԱԶԵՄԵՎԻ ԿՕՐԵՍՊՈՆԵՆՏԻ ԵՆԵՐՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ:

Ուսումնարանում, բացի զանազան զինագիտական առարկաներից, աւանդվում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ:

Ցանկացողները կարող են ԳԱՇՆԱԿԻ (բոյալ) վրա ածել սովորել, իր համար պանսիօնում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ:

Ուսումնարանում ընդունվում են երթեւեկներ, ԿԻՍԱԹՈՇԱԿԱՌՈՐՆԵՐ ԵՎ ՌՈՇԱԿԱՌՈՐՆԵՐ: Պանսիօնները կուղարկվեն ամառանոց ԿՕՐԵՐ:

Հասցէն. Тифлисъ, Гановская улица, домъ Шахназарова. 2-5

ՆԻԻ-ԵՐԿ

ԸՆԿԵՐ. ԿԵԱՆՔԻ Փ. ԱՊԱՀՈՎ.

ԿԵԱՆՔԻ ՓՈՒԱԳԱՐՁ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ «ՆԻԻ-ԵՐԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ կենք ապահովացնել ցանկացողներին խնդրում են զիմեք, իրան վերաբերեալ բժշկական խորհուրդներ քաղելու համար, բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆԻՆԻ:

ՏԵՍՈՒՆ ԿԵԱՆՔԻ Փ. ԱՊ. «ՆԻԻ-ԵՐԿ» ԸՆԿ. ՄԻՈՒՅԼՈՎ. 3-3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւորի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻՅ ղէպի ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթիք մի անգամ, հինգշաբթի 4/16 ապրիլից սկսած:

ԵՒ ՓՈՒԱԳԱՐՁ

Բաժնւոյից Մարսէյ մտնելով Տրապիզոն, Մամսոն, և Կ. Պոլիս, հինգշաբթի օրերը, երկուշաբթիք մի անգամ, հինգշաբթի 26 ապրիլից (մայիսի 8-ից) սկսած:

ԲԱՌՈՒՄԻՅ ՇՈԳԵՆԱՐԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Հինգշաբթի, 21 յունիսի (3 յուլիսի), շոգենաւ ՄԻՆԳՐԵԼԻԱ, նաւապետ ԺԻՌՈՒՆ:

— 5/17 յուլիսի	— ԱՆԱՏՈՒՄ	— ԳԱՐԻԳ.
— 19/31 յուլիսի	— ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ
— 2/14 օգոստոսի	— ՄԻԳՐԵԼԻԱ	— ԺԻՌՈՒՆ

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն զիմեք ընկերութեան ագէնտներին. ԲԱՌՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբեհէմայա, իսկ Թիֆլիսում պ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, նախկին Արծրունու գաղթեւայում, № 114.

1-10 (Հ. և Ե.)

ՊՐՈՎԻՃՈՐ Ա. ՇՏԵԻՆԵՐԻ ՄԻՋՈՏԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՅԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՕԴՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՐ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՐ ԷԼԵԿՏՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՐ ՓՈՇԵ 30 ԿՈՊ.

ԳԼԻԱԴՈՐ ՊԱՀԵՍՏ.

ԹԻՖԼԻՍՈՒՄ Դեղագործական ապրանքների կապիտալ ընկերութեան մէջ և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակիլերի, Սէնչի-կովսկու և Ագմուրովի ղեղաւորում:

ЗУБНАЯ КАПЛИ: КОР. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИР: ФЛ. 80 К.
A. ШТЕКЕР

15-52 (Հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կաւիա, վարձարար արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են աւան օր

ԱՌԱՋՈՏԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆ—9-11 Ժ. վերաբուժութեան (և առամնացալի) սիֆիլիսի և աչքացալի բՈՒԿԿՈՎՍԿԻ—10-11 Ժ. Ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԵՐԵՎԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—10 1/2-11 Ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12-1 Ժ. Ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:
ՊՐՈՋՐՈՎՍԿԻ—12-1 Ժ. Ներքին, կանանց և երեխայոց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՉԵՊԻՐԿՈՎՍԿԻ—5-5 1/2 Ժ., մէղի և խրիի հետադադարութիւն: Կրծքացալի:
ԳԱԴՈՎՍԿԻ—5-6 1/2 Ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2-6 1/2 Ժ. Ներքին, երեխայոց և ջղային ց. (էկզյարտեւայի):
ԴԻՇԱՆԻՆՈՎ—6 1/2-7 1/2 Ժ. վերաբուժ. (և կոկորդի, ականջի, քիթի ց.) և վնասի. ց.
ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆ—6 1/2-7 1/2 Ժ.
ՎՃԱՐ—50 Կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին:
Հերթալը բժիշկ-երեկ. Ժ. 9-ից մինչև առ. Ժ. 7-ը:
Հիւանդանոցի վերադադար բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆ



Մ. Գ. ՑԵՅՏԼԻՆԻ

ՃԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ


ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԲԸ

Պաշտօնի այդու դիմաց, անկիւնի մագաղիւնում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՆՈՑՆԵՐ. ՊԵՆՏԵՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈՎԻՆԵՐ, ՋԵՐՄԱՋԱՓԵՐ, թէ անհասկնալի, թէ դուրսը կախիլու և թէ վանանների համար վերատառութեամբ և վիսյական ունեցող ՄԱԿՍԻՄԱՆ ջերմաչափեր: Լորէնցի և պէնսիլի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շիֆաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր:

Ակնոցներ և պէնսիլներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագաղիւնում յանձն են առնում նմանապէս փշացած իրերի նորոգելը և ապագիւնների ղնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:



20-50 (Հ)